

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԵԾ ԶԱՏԱԳՈՎԸ

(Լ. Ն. Տոլստոյի ծննդյան 150-ամյակի առթիվ)

Բանասիր. գիտ. դոկտոր Կ. Ն. ԼՈՄՈՒՆՈՎ (Մոսկվա)

Հանճարեղ գրող, մեծ մտածող, իր ժամանակի ցավերին ու դժբախտությաններին կրքոտությամբ արձագանքող և նիկողաեիչ Տոլստոյը վաղ հասակացավ, որ պատերազմի ու խաղաղության հարցերը պատկանում են մարդկային ողջ պատմության ամենաաշխույժ, ամենասուր և ամենազովար հարցերի թվին:

Տոլստոյի դարաշրջանը պատմության մեջ մտավ որպես համարյա անընդհատ մեծ ու փոքր պատերազմների դարաշրջան: Դրանք հատկապես հաճախակի ու արյունահեղ դարձան այն պահից սկսած, երբ բուրժուական հասարակարգը թեակոխեց իմպերիալիզմի փուլը:

1896 թ. գրած իր «Հայրենասիրություն, թե խաղաղություն» հոդվածում Տոլստոյը տալիս է անցյալ դարի վերջին ստեղծված միջազգային հարաբերությունների վիճակի հետևյալ վառ նկարագիրը. «Բացեք ձեր ցանկացած ժամանակի լրագրերը և ամենուրեք ու ամեն բույս կգտնեք մի սև կետ, հնարավոր պատերազմի մի պատճառ. երբեմն դա կլինի Կորեան, երբեմն Պամիրը, մերթ ամերթ հանրապետական երկրները, մերթ ամերթ Հաբեշտանը, մերթ ամերթ Հայաստանը, մերթ ամերթ Թուրքիան, մերթ Կենեցուելան, մերթ Տրանսվաալը: Ավաղակային աշխատանքը ոչ մի բույս չի դադարում, և մերթ ամերթ այստեղ, մերթ այնտեղ առանց դադարելու փոքր պատերազմ է գնում՝ ինչպես հրացանազարկերը զորաշղթայում, և իսկական, մեծ պատերազմը ամեն բույս կարող է ու պետք է սկսվի»¹:

Հակաիմպերիալիստական մեկ այլ հոդվածում («Կարթագենը պետք է կործանվի»), որ գրված է երկու տարի հետո, Տոլստոյը մեծ տագնապով էր խոսում այն մասին, որ ուղղամամուլ ուժերը ավելի ու ավելի բացորոշ և լկտիորեն ձգտում են վատացնել միջազգային հարաբերությունները: Նա գրում էր. «Եվրոպայի բոլոր սահմանադրական պետություններում... միջազգային հարաբերությունները դիտավորյալ կերպով ավելի ու ավելի են բարդացվում, և դա պետք է հանգեցնի պատերազմի: Առանց որևէ առիթի թալանվում են խաղաղ երկրները, ամեն տարի ինչ-որ տեղ թալանում են և սպանում, և ամեն ոք ապրում է համընդհանուր փոխադարձ թալանի ու սպանության մշտական սարսափի մթնոլորտում» (39, 198—199):

Տոլստոյի 1890—1900-ական թթ. հակապատերազմական հրապարակախոսության մեջ առանձնահատուկ ուժով արտահայտվեց գրողի զգաստ ունե-

¹ Л. Н. Толстой, Полное собрание сочинений (юбилейное издание), т. 90, № 97: Այս հրատարակությունից ընդլող թաղվածքների աղբյուրները հետագայում նշվում են տեքստում, չույն տալով հատորներն ու էջերը:

լիզմի այն գիծը, որ Վ. Ի. Լենինը բնորոշում էր որպես «բոլոր և ամեն տեսակի դիմականների պատում»², իր աշխատություններից մեկում Լենինը գրում էր այն մասին, թե միլիտարիզմի դեմ մղվող պայքարի հաջողության համար որքան կարևոր է ժողովրդական մասսաների առջև բաց անել «այն գաղտնիքը, որի մեջ ծնվում է պատերազմը»³։ Տոլստոյի հակապատերազմական հրապարակախոսության առաջնահերթ նշանակությունը հենց այն էր, որ նրանում անողորմաբար մերկացվում ու խարաղանվում էին ինչպես պատերազմի ուղղակի հրձիգները, այնպես էլ նրանց գաղափարախոսներն ու փաստաբանները։

Տոլստոյը ցույց էր տալիս այն վտանգը, որով հղի էին պանգերմանիզմի, պանամերիկանիզմի, պանսլավոնականության, սիոնիզմի, ինչպես նաև ճապոնական, ֆրանսիական և այլ տիպի ռեանշիզմի ռեակցիոն գաղափարները։ Բացորոշ ու խստորեն, ամբողջ աշխարհի առջև նա մերկացնում էր նման գաղափարների կրողներին—լինել դա պրուսական կայզեր Վիլհելմը, որին մեծ պրոզը անվանում էր «բոլոր տիրակալներից ամենալկտին» կամ ամերիկյան պրեզիդենտ Ռոզվելտը, որին Տոլստոյը կոչում էր ոչ այլ կերպ, քան՝ «իմպերիալիստ ու միլիտարիստ» կամ ռուս կայսր Նիկոլայ II-ը, որը Տոլստոյի համոզմամբ հանդիսանում էր «հանցագործությունների ամենաականավոր մեղավորը» կամ ճապոնական միկադոն՝ 1904—1905 թթ. ռուս-ճապոնական պատերազմի զխավոր հանցագործներից մեկը։

Իր խոսքերով ասած «այսպես կոչված մեծ տերությունների», այդ «ավազակային որջերի» վերահիշյալ և ուրիշ զխավորներին համարելով մարդկության հանդեպ հանցագործներ, Տոլստոյը պարզորոշ տեսնում էր, որ պատերազմները ծագում են ոչ միայն բռնակալ իշխողների շար կամքով։ «Մի՞թե կարող է այնպես լինել,— գրում էր նա 1905 թ.,— որ միլիոնավոր մարդկանց գործունեությունը ուղղված լինի ընդդեմ նրանց կամքի ու շահերի միայն այն պատճառով, որ այդ է կամենում մի մարդ, որը բոլոր տեսակետներից ավելի ցածր է կանգնած այն բոլոր մարդկանց մտավոր ու միջին մակարդակից, որոնք բնաջնջվում են կարծես թե նրա կամքով։ Ուրեմն ինչո՞ւ է թվում, թե պատերազմի պատճառը Նիկոլայն ու միկադոն են։ Այդ այդպիսի է թվում հենց այն նույն պատճառով, ինչպես որ թվում է, թե ականապատված քաղաքը պայթեցրեց այն մարդը, որ կաշծը մոտեցրեց քաղաքի տակ դրված ականին։ Ոչ թե Նիկոլայն ու միկադոն են պատերազմ անում, այլ այն հասարակական կարգը, որի ժամանակ միկադոն ու Նիկոլայը կարող են դժբախտություն պատճառել միլիոնավոր մարդկանց։ Մեղավորը ոչ թե նրանք են, այլ այն մեքենան, որի առկայությունը հնարավոր է դարձնում պատերազմը։ Հետևապես, մեղավոր են նրանք, ովքեր ստեղծում են այդ մեքենան»։

Պատերազմի զխավոր պատճառը, ասում է Տոլստոյը, թաքնված է միապետական ու բուրժուական պետությունների և դրանց կառավարությունների հարստահարիչ բնույթի մեջ, «միևնույն է ռուս ցարի կառավարությունն է դա, թե թուրքական սուլթանի կամ անգլիականը՝ իր Չեմբերլենով ու գաղութային

2 Վ. Ի. Լենին, Երկեր (IV հրատ.), հատ. 15, էջ 244։

3 В. И. Ленин, Полное собрание сочинений, т. 45, էջ 318։

քաղաքականությունը կամ Հյուսիս-Ամերիկյան շտատների կառավարությունները՝ օրենսդրություն հովանավորելու իր քաղաքականությունը և իմպերիալիզմով»:

Դեռևս 1857 թ. գրված «Լյուցերն» պատմվածքում Տոլստոյը զայրույթով դատապարտում էր անգլիական գաղութարարների խժոժությունները Ասիայում և ֆրանսիական գաղութարարների գաղանությունները Աֆրիկայում, որոնք սպանում էին աֆրիկացի տեղաբնիկ բաբիլոնիկն աշխատողներին, որոնք մոտ «հացահատիկները լավ են աճում»: Այդ նույն պատմվածքում Տոլստոյը ծաղրում է ևսլոնական նվաճողների ևրեսպարտությունը, այն մարդկանց, ովքեր իրենց շարագործությունները սքողում էին Ասիայի ու Աֆրիկայի տեղաբնիկների մեջ «քրիստոնեությունը տարածելու և նրանց կրթելու» մասին բարբառանքներով:

«Պատերազմ և խաղաղություն» վեպում խորապես մերկացվում է Նապոլեոն Բոնապարտի նվաճողական քաղաքականությունը, այն մարդու, որին Տոլստոյն անվանում է «ժողովուրդների դահիճ»:

1880—1900 թթ. իր հրապարակախոսական երկերում Տոլստոյը լայնորեն ու մանրամասնաբար լուսաբանում է ոչ միայն գաղութային նվաճումների վաղ փուլը, այլև գաղութատիրության ծաղկուն շրջանը, որ կապված էր իմպերիալիզմի դարաշրջանի սկզբնավորման հետ:

«Ուրեմն ի՞նչ պետք է մենք անենք» տրակտատում, որ գրված է 80-ական թթ. սկզբին, Տոլստոյը տալիս է գաղութային զավթումների ցնցող պատկերը, նկարագրելով ընդամենը 150 հազար մարդուց բաղկացած ֆիջի փոքր ժողովրդի ողբերգական վիճակը, մի ժողովուրդ, որը խաղաղ ապրում էր Պոլինեզիայի կղզիներում նախքան ամերիկյան միսիոներների գալը, որոնց հետևեց ռազմանավերի էսկադրան: Այստեղ Տոլստոյը մանրամասնորեն պատմում է ողբերգության բոլոր փուլերի մասին, այն սպառնալիքների, բռնագրավումների և լիակատար ստրկացման մասին, որոնց ենթարկվեց ֆիջիի դժբախտ ժողովուրդը, ընկնելով սկզբում ամերիկյան, իսկ ապա՝ անգլիական գաղութարարների բռնապետության տակ:

«Ֆիջիի ժողովրդի կյանքի ողբերգական էպիգոգը» Տոլստոյը նկարագրել է որպես գաղութային ստրկացման բնորոշ օրինակ, ուր, նրա խոսքերով ասած, ակնառու կերպով «արտահայտված էր ամեն ինչ. և՛ ստրկացման առաջին հիմնական պայմանը՝ թնդանոթը, սպառնալիքը, սպանություններն ու հողերի բռնագրավումը, և՛ դրա գլխավոր միջոցը՝ դրամը», որը փոխարինեց ստրկացման «բոլոր այլ» եղանակներին:

Տոլստոյի 1890-ական և 1900-ական թթ. հրապարակախոսության մեջ և նամակներում գաղութատիրության դեմ ուղղված բողոքը սերտորեն շաղկապված է իմպերիալիստների կողմից իրենց գրաված երկրներում իրականացվող սպառնալիքների և ռասայական անհավասարության դեմ ուղղված բողոքի հետ: Տոլստոյը համակրանքով էր խոսում գաղութային ճնշման տակ գտնվող բոլոր ժողովուրդների մասին: Նա ցավակցում էր կուրացիներին և ֆիլիպինցիներին, որոնց դաժանորեն ճնշում էին իսպանաամերիկյան հարստահարիչները, վրդովմունք էր հայտնում Հնդկաստանը ստրկացրած անգլիացիների գաղանությունների առթիվ, զայրույթով խորազանում էր Հնդկաչինի ժողովուրդներին ճնշող ադրեսորներին, հանդես էր գալիս ի պաշտպանություն լեհական ու

սերբական հայրենասիրների, որոնք պայքարում էին իրենց երկրների ազդե-
լին անկախության համար:

Տոլստոյը արձագանքել է այն բոլոր նվաճողական, անարդարացի պա-
տերազմներին, որ մղում էին նրա ժամանակաշրջանի եվրոպական ու ամերիկ-
յան իմպերիալիստները աշխարհի տարբեր մասերում: Այսպես, 1896 թ. նա
գրում է «Իտալացիներին» հոդվածը՝ իտալահարձակական պատերազմի կա-
պակցությամբ, 1898 թ.՝ «Երկու պատերազմ» հոդվածը՝ Կուբայի և Ֆիլիպին-
յան կղզիների համար մղվող իսպանաամերիկյան պատերազմի մասին,
1899 թ.՝ «Նամակ Գ. Մ. Վոլկոնսկուն» (որը դեկաբրիստ Վոլկոնսկու թոռն
էր)՝ անգլո-բուրական պատերազմի մասին, իսկ 1904 թ. հանդես է դալիս
պատերազմող կողմերին ուղղված «Ուշքի՛ եկեք» հոդվածով, ուր խոսվում էր
ռուս-ճապոնական պատերազմի մասին:

Պատերազմի և խաղաղության թեման մեծ տեղ է գրավում Տոլստոյի ոչ
միայն գեղարվեստական ու հրապարակախոսական երկերում, այլև նրա հսկա-
յածալալ նամակագրության մեջ: Առանձին հետաքրքրություն են ներկայաց-
նում Տոլստոյի ստացած այն նամակները, որոնց հեղինակները կրում էին
տարբեր երկրներում մղվող պատերազմների, աղետների ու արհալիրքների
ողջ ծանրությունը: Պատասխանելով այդ նամակներին, Տոլստոյը ոչ միայն
իր ցավակցությունն էր հայտնում պատերազմից տառապողներին ու զոհված-
ներին, այլև խոսում էր այն մասին, թե ում մեղքով են առաջացել այդ պատե-
րազմները և ինչպես պետք է ազատվել դրանցից:

Ագրեսիայի, կամայականության, թալանի, ուրիշի հողերի բռնի գրավ-
ման ամեն մի նոր փաստի առիթով ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Յասնա-
յա Պոլյանայից հազարավոր վերստերով հեռու գտնվող երկրների մարդկանց
մտքում անմիջապես մի հարց էր ծագում. «Իսկ ի՞նչ կասի այդ մասին
Տոլստոյը»:

1900 թ. գարնանը Յասնայա Պոլյանայում Միացյալ Նահանգներից մի
նամակ ստացվեց, որի հեղինակը՝ բժշկության և փիլիսոփայության դոկտոր,
արվեստի մագիստր, ԱՄՆ-ի Գերագույն դատարանի փաստաբան, յոթանա-
սունամյա Մոնտեզյու Լեվերսոնը 1859—1860-ական թթ. ապրել էր Անգլիա-
յում և մտերիմ էր եղել Դերցենի հետ: 1900 թ. փետրվարին Ֆիլադելֆիայում
կայացած հակապատերազմական միտինգում նա մի փայլուն ճառ արտասա-
նեց, անվախորեն դատապարտելով ամերիկյան բանակի հարձակումը Ֆիլի-
պինների վրա: Տոլստոյին ուղարկելով այդ ճառի տեքստը պարունակող բրո-
շյուրը, Լեվերսոնը գրում էր. «Այն հանցագործություններն ու սարսափելի
բաները, որոնց մասին ես խոսում էի իմ ճառում, շարունակում են կատարվել
ամեն օր: Միացյալ Նահանգների ժողովուրդը ունկնդրում է Ձեր ձայնին՝ ի սեր
Ձեր նկատմամբ տածած հարգանքի և հանուն ոտնահարված մարդասիրու-
թյան: Աղաչում եմ Ձեզ, բարձրացրեք Ձեր ձայնը ընդդեմ շարագործ ու փշա-
ցած մարդկանց, որոնք Միացյալ Նահանգների անունից կատարում են այդ
ղլվելի գործերը, աշխատելով ժողովրդից թաքցնել դրանք»:

Լեվերսոնը խոսում էր 1898 թ. Ֆիլիպինյան կղզիներում մղված իսպա-
նաամերիկյան պատերազմի մասին, որի հետևանքով իսպանական այդ
հարուստ գաղութն ընկավ ԱՄՆ-ի գերիշխանության տակ: «Այդ պատերազմի
մասին, — գրում էր Տոլստոյը, — դիտար ամբողջ աշխարհը, և բոլոր մարդիկ
լարված ուշադրությամբ հետևում էին դեպքերի զարգացմանը»: Տոլստոյը

արձագանքեց դրան իր «Երկու պատերազմ» հոդվածով, որը տպագրվեց արևմտահայկական հրատարակվող «ИСТКИ СВОБОДНОГО СЛОВА» թերթում:

Նստորեն քննադատելով Ամերիկայի միլիտարիստորեն տրամադրված կառավարիչներին, Տոլստոյը միաժամանակ հավատում էր ամերիկյան ժողովրդի խաղաղասիրությանը: 1904 թ. զրուցելով Ֆրանսիացի լրագրող Անրի Բուրդոնի հետ, նա ասում էր. «Ես շատ լավ գիտեմ, թե ինչ բանի համար են միշտ կշտամբում ամերիկացիներին և դիտեմ, որ նրանք ինչ-որ չափով արժանի են այդ կշտամբանքներին: Իրոք, «գործարար» ամերիկացին աշխատում է միայն դրամի համար, ապրում է միայն հանուն իր միլիարդների: Բայց մի՞թե նման է նրան ամբողջ ժողովուրդը և կարելի՞ է արդյոք ժողովրդի վրա բարեկամ ունեորդ ասակարգի անկշտության համար պատասխանատու լինելու բեռը: Ես ինքս ճանաչում եմ միանգամայն լրջախոհ շատ ամերիկացիներին—նրանք ազնիվ են, խելացի, զուրկ են այդ ողբալի արատներից»:

«Հայրենասիրությունը և կառավարությունը» հոդվածի մեջ, որ գրված է 1900 թ., Տոլստոյը բերում է Միացյալ Նահանգների մի քաղաքացուց ստացված նամակը, որի մեջ կան այսպիսի խոսքեր. «Ֆրանսիայի, Գերմանիայի, Անգլիայի ու Ամերիկայի հասարակ ժողովուրդը դեմ է պատերազմին... Մենք խաղաղասեր ենք և վախենում ենք պատերազմից, ատում ենք այն»: «Այսպես է գրում Հյուսիս-Ամերիկյան շտատների քաղաքացին,— եղրակացնում է Տոլստոյը,— և տարբեր կողմերից տարբեր ձևերով լսվում են նույնպիսի ձայներ»:

Իր այդ նույն հոդվածի մեջ Տոլստոյը մտցրել է պրուսական գվարդիայի հետ երկու ռազմարշավ կատարած գերմանացի մի զինվորից իր ստացած նամակի մի մեծ հատված: «...Հոգուս ամբողջ խորությամբ ատում եմ պատերազմը, որն ինձ անասելի չափով դժբախտացրեց,— գրում էր հաշմանդամ դարձած այդ զինվորը:— Իմ խորագույն համոզմամբ պատերազմը միայն մեծ չափերով կատարվող առևտուր է, փառասեր ու հզոր մարդկանց առևտուր, որոնք առուծախի են հանում ժողովուրդների բախտը»:

Եղրափակելով իր նամակը, գերմանացի այդ զինվորն իր նման «վիրավորված մարտիկների» անունից Տոլստոյին խնդրում էր գրել «մի լավ գիրք պատերազմի մասին»: Տոլստոյը պատասխանեց, որ ինքը «դրա վրա աշխատում է» և խնդրում է իր թղթակցի համաձայնությունը՝ նրա նամակը թերթերում հրապարակելու մասին: Այդ ժամանակ էլ Տոլստոյը ձևակերպեց իր հակապատերազմական հոդվածի գլխավոր միտքը, որի վրա լարված աշխատում էր այն ժամանակ: «Հարկավոր է ցույց տալ,— նշում էր նա իր օրագրում,— որ ներկայիս իրավիճակը և հատկապես Հաագայի կոնֆերանսը ցույց տվեցին, որ անօգուտ է բարձրագույն իշխանություններից որևէ բան սպասելը և որ եթե այս սարսափելի, սպառնալի վիճակը հնարավոր է վերացնել, ապա այդ հնարավոր է միայն առանձին մասնավոր անձնավորությունների ջանքերով»:

Այստեղ Տոլստոյը խոսում է 1899 թ. հոլանդական Հաագա քաղաքում կայացած դիվանագիտական կոնֆերանսի մասին: Դրան մասնակցում էին 26 պետությունների ներկայացուցիչներ, որոնք քննարկում էին սպառազինությունների սահմանափակման և խաղաղությունը ապահովելու հարցը: Գրողը դաշրացած էր այն բանի կապակցությամբ, որ Հաագայի կոնֆերանսի գլխավոր նախաձեռնողներից մեկի գերում հանդես էր գալիս ռուսական կայսր

Նիկոլայ II-ը: Երբ ամերիկյան թերթերից մեկը դիմեց Տոլստոյին՝ խնդրելով, որ նա իր կարծիքը հայտնի Հաագայի կոնֆերանսի մասին, գրողը պատասխանեց հետևյալ հեռագրով. «Հաագայի խաղաղության կոնֆերանսը քրիստոնեական երեսպաշտության լսկ զղվելի արտահայտությունն է»: Նկատելով, որ այդ պատասխանի նախնական սեպագրությունը սկսվում է այն խոսքերով, թե խաղաղությունը պաշտպանելու հարցը «կարող են լուծել այն մարդիկ, որոնք ոչ միայն խոսում են դրա մասին, այլ նրանք, ովքեր լստիպված են կռվի գնալ», իրենք են գնում պատերազմի»:

Խաղաղության կողմնակիցների շարժման դեռևս վաղ շրջանում Տոլստոյը կարողացավ միմյանցից տարբերել պատերազմը վերացնելու միջոցների վերաբերյալ տարբեր տեսակետների ներկայացուցիչներին: Նրանցից ոմանք, ինչպիսիք էին Հաագայի կոնֆերանսի կազմակերպիչները, պարզորոշ կերպով ծառայում էին իրենց կառավարությունների շահերին: Ուրիշները, որ մեծամասնություն էին կազմում, անկեղծորեն հավատում էին միլիտարիզմի դեմ իրենց մղած պայքարի դուռ պացիֆիստական մեթոդների արդյունավետությանը: Երրորդ խումբը կազմում էին Տոլստոյի համար առավել արժեքավոր այն մարդիկ, ովքեր համոզված էին, որ խաղաղության համար մղվող պայքարը միայն այն դեպքում կլինի արդյունավետ, եթե դրան մասնակցեն ժողովրդական լայն զանգվածները, որոնց ամենից ավելի է անհրաժեշտ խաղաղությունը:

Տոլստոյի տարբերությունը իր ժամանակի պացիֆիստներից առաջին հերթին հենց այն էր, որ պատերազմի նկատմամբ խաղաղության հաղթանակի իր բոլոր հույսերը նա կապում էր այն բանի հետ, որ ժողովուրդն իր ձեռքը կվերցնի խաղաղության դորձը և նրան ակտիվ գործունեության էր կոչում ընդդեմ միլիտարիզմի:

Տոլստոյին, որպես խաղաղության մարտիկի, դիմում էին ոչ միայն մասնավոր անձինք, խնդրելով նրա խորհուրդներն ու օժանդակությունը, այլև բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք հանդես էին գալիս ընդդեմ սպառազինության և պատերազմների: Տոլստոյը շփման մեջ էր շատ այդպիսի կազմակերպությունների հետ, պատասխանում էր նրանց կոչերին ու դիմումներին:

Անցյալ դարի 90-ական թթ. սկզբին կազմակերպվեցին խաղաղության մի շարք կոնգրեսներ: Դրանց կազմակերպիչներն իրենց պարտքն էին համարում Տոլստոյին ծանոթացնել իրենց նպատակներին ու ծրագրերին և հրավիրում էին նրան մասնակցելու խաղաղության կողմնակիցների շարժմանը: Այսպես, օրինակ, կոնգրեսում կայացած խաղաղության միջազգային կոնգրեսի կազմակերպական կոմիտեն 1890 թ. հունիսի 2-ի նամակով Տոլստոյին հրավիրում էր կոնգրես՝ խնդրելով մասնակցել կոնգրեսին և պատմել այն, դառնալով կոնգրեսի վիցե-պրեզիդենտը: Կոնգրեսի կոնգրեսից հետո խաղաղության միջազգային կոնգրեսներ անցկացվեցին Փարիզում և Հռոմում:

Տոլստոյը ուշադրությամբ հետևում էր այդ կոնգրեսների աշխատանքներին և լայնորեն օգտագործում էր դրանց նյութերը իր հակապատերազմական հրապարակախոսության մեջ: Խաղաղության կոնգրեսների ու կոնֆերանսների կազմակերպիչներին ու մասնակիցներին մեծ գրողը զգուշացնում էր, որ նրանք չպետք է շատ մեծ հույսեր կապեն իրենց ընդունած «գեկլարացիաների» ու «մանիֆեստների» ուժի ու նշանակության հետ: Միաժամանակ նա

գտնում էր, որ նրանց գործունեությունը որոշակի օգուտ է տալիս, քանի որ այլ միջոցով պատերազմի՝ որպես շարիքի մասին տեսակետը «ավելի խորն է թափանցում հասարակական գիտակցության մեջ», հույս ներշնչելով, որ հետո չէ այն ժամանակը, «երբ պատերազմները անհնարին կդառնան»:

1900 թ. Փարիզում կայացած Խաղաղության X միջազգային կոնգրեսի նախաձեռնողները, նախորդ կոնգրեսների կազմակերպիչների նման, Տոլստոյին հրավիրեցին անդամակցելու կոնգրեսի «հոգաբարձական կոմիտեին», որի մեջ, նրանց կարծիքով, պետք է մտնեին «այն անձինք, ովքեր առավել մեծ ծառայություններ էին մատուցել Խաղաղության գաղափարին»:

Իր պատասխանն անմակում Տոլստոյը հաղորդում էր, որ հիվանդության պատճառով չի կարող Փարիզ մեկնել և մասնակցել կոնգրեսի նիստերին. «...Հղում եմ իմ ցանկությունը, — գրում էր նա, — որպեսզի 1900 թ. համաշխարհային կոնգրեսն առաջ մղի եղբայրության և Խաղաղության գաղափարը»:

Անցնում էին տարիները: Տոլստոյի օժանդակությունը ստանալու համար նրան լին դիմում Խաղաղության նոր կոնգրեսների ու կոնֆերանսների, ինչպես նաև Խաղաղության պաշտպանության երիտասարդական ու կանանց միջազգային ընկերությունների կազմակերպիչները: Հաճախ նրան հրավիրում էին Նվրոպայի ու Ամերիկայի տարբեր երկրները՝ Խաղաղության կոնգրեսներում ելույթ ունենալու համար:

Խաղաղության կողմնակիցները լայնորեն օգտագործում էին մեծ դրողի եղինակավոր անունը: Այսպես, 1901 թ. իտալական Մեսինա քաղաքում կազմակերպվեց Խաղաղության միջազգային երիտասարդական կոմիտեն, որ կոչվում էր «Լև Տոլստոյ»: Զիկագոյի Խաղաղության ընկերությունը, որ հանդիսանում էր Խաղաղության ամերիկյան ընկերության բաժանմունքներից մեկը, 1902 թ. դեկտեմբերի 2-ին Յասնայա Պոլյանա ուղարկեց հետևյալ բովանդակությամբ մի ծանուցագիր. «Տոլստոյին, Խաղաղության ջատագույն: Ողջունում եմ Ձեզ և հաղորդում, որ 1902 թ. նոյեմբերի 4-ին Դուք ընտրված եք Զիկագոյի Խաղաղության ընկերության պատվավոր անդամ և վիցե-պրեզիդենտ: Խորին հարգանքով, քարտուղար-թղթակից էլլա Ա. Վ. Հոսուէլը»: 1908 թ. մարտին Տոլստոյին է դիմում Խաղաղության բարեկամների լեհական ընկերությունը՝ հաղորդելով, որ նա ընտրված է ընկերության պատվավոր անդամ:

Տարիների ընթացքում Տոլստոյը ոչ միայն չէր դադարում հետաքրքրվել Խաղաղության կողմնակիցների շարժումով, այլ, ընդհակառակը, նրա նկատմամբ ցուցաբերում էր ավելի ու ավելի մեծ հետաքրքրություն: Դրա ապացույցներից մեկն էլ այն է, որ 80-ամյա Տոլստոյը որոշում է անձամբ մասնակցել Ստոկհոլմում գումարվող Խաղաղության միջազգային կոնգրեսի աշխատանքներին:

«Ուշ շրջանի Տոլստոյը» մեծ տագնաւորվ էր հետևում միլիտարիզմի աճին Նվրոպայում ու Ամերիկայում, սպառազինությունների ծավալվող մրցավազքին: Նա նշում էր, որ անցյալ դարի 90-ական թթ. եվրոպական երկրների բանակներում 28 միլիոն զինվոր կար և որ համաշխարհային պատերազմի սպառնալիքը ավելի ու ավելի ռեալ ու վտանգավոր էր դառնում:

Այդ վտանգի կանխատեսումը Տոլստոյին ստիպեց, շնայած առաջացած տարիքին ու հիվանդություններին, ընդունել Ստոկհոլմի Խաղաղության կոնգ-

բեսի կազմակերպիչների առաջարկը և ղեկուցում պատրաստել կոնգրեսի համար: Գրողը ձգտում էր այն բանին, որպեսզի Ստոկհոլմի կոնգրեսը չդառնա Հաագայի կոնֆերանսի կրկնությունը: «Հարկավոր է ասել ողջ ճշմարտությանը», — գրում էր Տոլստոյը իր ղեկուցման ծրագրում:

Տոլստոյին չհաջողվեց այդ ճշմարտությունն ասել կոնգրեսի կազմակերպիչներին: Նրանք սաստիկ վախեցած էին այն փաստից, որ գրողը համաձայնվել է ղեկուցումով հանդես գալ Ստոկհոլմում և զանազան բարետես պատրրվակներով հետաձգեցին կոնգրեսը: Իկյդ առիթով Տոլստոյն ինքը գրում էր. «Նա կարծում եմ, թեպետև դա իմ կողմից այնքան էլ համեստ չէ, որ կոնգրեսի հետաձգման գործում դեր խաղաց ոչ միայն բանվորների գործադուլը Շվեդիայում, այլև իմ նամակն ու թիրթում ապագրածս հոգվածը. — Ինչպե՞ս վարվենք նրա հետ: — Վսնդել չի կարելի, — և հետաձգեցին կոնգրեսը»:

Պաշտոնապես հայտարարված էր, որ 1909 թ. օգոստոսի 14-ին նշանակված կոնգրեսը հետաձգվում է բանվորական գործադուլի պատճառով: Բայց շատ թերթեր այն ժամանակ գրում էին, որ գլխավոր պատճառը ուրիշ էր՝ Տոլստոյից վախենալը: Պետք է նշել, որ Տոլստոյից ստանալով նրա ղեկուցման տեքստը, Ստոկհոլմի կոնգրեսը նախաձեռնողները չհամարձակվեցին հրապարակել դա և ղեկուցումը կարդացվեց միայն կոնգրեսում, երբ այն վերջապես գումարվեց:

Տոլստոյը մտադիր էր Ստոկհոլմի կոնգրեսի ամբիոնից կոչ անել բարի կամքի տեր մարդկանց, առաջին հերթին միլիոնավոր հասարակ մարդկանց՝ զենք չվերցնել, արյուն չթափել եղբայրասպան պատերազմներում: Ինչպես և Հաագայի կոնֆերանսի օրերին, այս դեպքում ևս Տոլստոյը վստահ չէր, որ իմպերիալիստական պատույթյունների կառավարությունները փոխադարձ համաձայնության կզան խաղաղության հարցում և կցրեն իրենց բանակները: Բայց նա այնուամենայնիվ համոզված էր, որ պատերազմները անխուսափելի չեն, որ դրանք կարելի է կանխել և որ այդ անել կարող են և պետք է անեն բոլոր երկրների հասարակ մարդիկ:

Բարձր գնահատելով Տոլստոյի հակաիմպերիալիստական ելույթները, մենք չենք մոռանում այն, որ գրողի աշխարհայացքին հատուկ էին մեծ հակասություններ, որ նրան հայտնի չէին մարդկանց ազատագրման իսկական ուղիները: Իհարկե, չարին բռնությամբ չզիմակայելու մասին տոլստոյական տեսությունը չէ այն միջոցը, որով կարելի է սանձահարել դաժան ու լկտի ագրեսորներին: Իկյո, պասսիվ անհնազանդության տոլստոյական կոչերը ամենաթույլ դեղատոմսն են, դրանց միջոցով պատերազմը կանխել հնարավոր չէ: Բայց մենք անուղղելի սխալ կկատարեինք, եթե Տոլստոյի ժառանգության մեջ չնկատեինք այն, ինչ պատկանում է նրա ուժեղ կողմերին, այն, ինչ թելադրված է նրա մեծ հանճարով:

Տոլստոյի ժառանգության ուժեղ կողմերի թվին է պատկանում դավթողական պատերազմներ սանձադեղնողների նրա համարձակ մերկացումը:

Իկյդ հանգամանքը կարողացան գնահատել Տոլստոյի ժամանակակիցներից շատերը: Ինատու Ֆրանսը նրան անվանում էր «պատերազմի ցասկոտ թշնամի» և կոչ էր անում Տոլստոյի օրինակին հետևելով ձգտել խաղաղության՝ «բոլոր ուժերի մշտական յարման միջոցով»:

Անցյալ դարի վերջին Բերնարդ Շոուն հայտարարեց, որ Տոլստոյ-հու-մանիստը «գլխավորում է Եվրոպան», վեր բարձրանալով «մեր բոլոր շեմ-բերեցներից ու կիտչեններին, գերմանական կայսերներից, լորդ-կանց-լերներից և կեղծ գաղափարների ու սուտ սարսափների բոլոր ստրուկներից»: Տոլստոյի ուժեղ կողմերից են նրա կրքոտ կոչերը հանուն խաղաղության, հանուն պատերազմները արգելելու, հանուն այն բանի, որպեսզի միլիոնավոր հասարակ մարդիկ, բոլոր աշխատավորները իրենց ձեռքը վերցնեն խաղա-ղության գործը:

Մեր կարծիքով, խորապես ճշմարտացի է Աննա Զեդերսի «Տոլստոյ» հոգվածում արտահայտված հետևյալ միտքը. «Նա խոսում էր խաղաղության համար պայքարողի լեզվով ոչ թե այն պատճառով, որ պացիֆիստ էր ու չա-րին չդիմակայող, այլ այն պատճառով, որ դասականոբեն ունիստ էր»: Որպես մեծ գրող-ուսուցիչ նա կարողանում էր ցույց տալ «մարդկայինը մարդու մեջ» և պայքարում էր այն ամենի դեմ, ինչ «սպառնում է նրա մարդ-կային արժանապատվությանը»:

Ի՞նչ մտքեր և զգացմունքներ են արթնացնում Տոլստոյի երկերը արտա-սահմանյան երկրների աշակերտ կոչված հասարակ մարդկանց մոտ: Ի՞նչ է մտածում Արևմուտքի ու Արևելքի երիտասարդ սերունդը, որ կյանք է մտնում ժամանակակից բարդ իրադրության մեջ:

Մեր երկրի տոլստոյական թանգարաններում, ինչպես և բոլոր այլ թան-գարաններում, կան հատուկ զբոսայգիներ, որոնցում այցելուները զրանցում են իրենց տպավորություններն ու մտքերը: Դժբախտաբար այդ զբոսայգիները բերե-լեն հրատարակվում: Զեռագիր վիճակում նրանք մնում են այնքան ժամա-նակ, մինչև որ լրացվեն նրանց բոլոր էջերը, որից հետո զրանք հանձնվում են արխիվ և համարյա ոչ ոքի կողմից այլևս չեն կարդացվում: Շատ ափսոս, որ վիճակն այդ է, մինչդեռ նրանցում արտահայտված մտքերը պետք է որ լսելի դառնան:

Բացենք Տոլստոյի մոսկովյան թանգարանների այցելուների տպավորու-թյունների զրանցման զբոսայգի մեկը: Ահա թե ինչ են գրում, օրինակ, Մոսկ-վայի միջազգային VI փառատոնի պատգամավոր մի խումբ ֆրանսիացի ուսանողներ. «Երիտասարդության և ուսանողների մոսկովյան այս փառատո-նում, ուր հանդիպեցին բոլոր երկրներից եկած հազարավոր մարդիկ, որ ոգեշնչված են խաղաղության ու բարեկամության միակ ցանկությամբ, ավե-լի ունիստ է դառնում Տոլստոյի զարմանալի կերպարը, մի մարդու, որը միշտ պայքարել է հանուն իսկական եղբայրության, հանուն միջազգային միասնու-թյան: Մենք պետք է միշտ կարդանք ու վերընթերցենք Տոլստոյին»:

Բելգիացի մի երիտասարդ բանվոր իր անունից և փառատոնի մասնակից իր ընկերների անունից հայտարարում է. «...Մեզ համար [Տոլստոյը] հան-դիսանում է մեր ժամանակների մեծ գաղափարի՝ հանուն խաղաղության մղվող պայքարի գաղափարի ոգեշնչողը»:

Հնդկաստանի, Ճապոնիայի, Հյուսիսային Աֆրիկայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Արևմտյան Գերմանիայի, Զեխտսլու-կիայի և Բազմաթիվ այլ երկրների այն պատգամավորները, ովքեր փառատո-նի օրերին այցելել են Լ. Ն. Տոլստոյի թանգարանները, իրենց գրառումներում միահամուռ կերպով ընդգծում են, որ իրենց կարծիքով Տոլստոյը անխզելի-րեն կապված է մեր ժամանակների ամենահզոր շարժման՝ հանուն խաղաղու-

թյան, հանուն միջազգային համագործակցության ծավալված պայքարի հետ։
 Եվ թող ոչ ոքի չթվա, թե Տոլստոյի՝ որպես խաղաղության մեծ մարտիկի մասին այդ պատկերացումը մեր երիտասարդ հյուրերի մտքում ծագել է միայն փառատոնի օրերին, երբ բոլոր մասնակիցների մտքերն ու զգացմունքներն ուղղված էին դեպի խաղաղության մեծ գործը։ Ինչպես գրում են Ֆրանսիացի ուսանողները, փառատոնը օգնեց իրենց ավելի պարզորոշ տեսնելու մեծ հումանիստ Տոլստոյի կերպարը, մի մարդու, որը կրքոտությամբ խաղաղություն և համերաշխություն էր ցանկանում բոլոր ժողովուրդների համար։

Արևմտյան Եվրոպայից հայրենիք վերադառնալու ճանապարհին Տոլստոյի մոսկովյան տուն-թանգարան էին այցելել Վինաթափման և միջազգային համագործակցության Մտոկհոլմի կոնգրեսի մի խումբ հնդիկ պատգամավորներ։ Տոլստոյին անվանելով «խաղաղության առաքյալ», այցելուների տպավորությունների գրանցման գրքում իրենց մտքերը նրանք վերջացնում են այսպես. «Մենք, որ Տոլստոյին մեծ իմաստուն ենք համարում, խորապես երջանիկ ենք, որ սովետական իշխանությունը աշխարհի մեծ ուշադրություն է դարձնում նրան»։

Այցելելով Յասնայա Պոլյանա, հնդիկ ղեկավար Իթալ Մինխը նշում է. «Արտակարգ են այն հոգատարությունն ու քննությունը, որոնցով Սովետական Միությունում պահպանվում է մի մարդու հիշատակը, որի ստեղծագործությունը հանդիսանում է խաղաղության և կատարմամբ մարդկության կրքոտ հույսերի մարմնավորումը, այն խաղաղության, որը հենվում է արդարության և մարդկանց ընկերության վրա։ Սովետական Միությունը հանդիսանում է հանուն խաղաղության, հանուն արդարացի և դեմոկրատական կարգերի մղվող մշտական ու հետևողական պայքարի ամենահամոզիչ ապացույցը, այն պայքարի, որ նա մղում է իր ստեղծման օրվանից։ Ես իմ երկիրը կվերադառնամ ավելի ևս ամրապնդված հավատով և ավելի, քան երբևիցե համոզված լինելով, որ անհրաժեշտ է հասնել Հնդկաստանի և Սովետական Միության ժողովուրդների, աշխարհի բոլոր դեմոկրատական ժողովուրդներին ամենալիակատար փոխմբռնմանը, ամենասերտ բարեկամությանը»։

Այս գրանցման մեջ խիստ պարզորոշ կերպով է արտահայտված, թե ինչպես են ընկալում Տոլստոյին ժամանակակից Հնդկաստանի ներկայացուցիչները, այն երկրի, որի ժողովուրդը հիշում է, թե ուսումնասիրելով մեծ գրողին ինչպիսի համակրանքով էր վերաբերվում գաղութային ստրկացման դեմ հնդիկների և ուրիշ ժողովուրդների մղած պայքարին։ Այդ նույն գրանցման մեջ Իթալ Մինխը Տոլստոյին անվանում է «ժամանակակից դարաշրջանի մեծագույն հումանիստներից մեկը»։

Ժողովուրդների հիշողության մեջ ապրում է մեծ հումանիստ Տոլստոյի կերպարը, մի մարդու, որը ջերմորեն պրոպագանդում էր խաղաղություն և համերաշխություն բոլոր ժողովուրդների համար։ Բարի կամքի տեր մարդիկ հիշում են, թե ինչպիսի ուժով և կրքոտությամբ էր Տոլստոյը բողոքում անարդարացի, զավթողական պատերազմների դեմ, ինչպիսի դայրույթով էր նշավակում իմպերիալիզմը, գաղութատիրությունը, միլիտարիզմը, որ տառապանքներ են բերում միլիոնավոր հասարակ մարդկանց։

Հենց նրանց, աշխատավոր այդ մարդկանց էին ուղղված Տոլստոյի կոչերը՝ իրենց ամուր ձեռքերով սանձել պատերազմի հրձիգներին, վճռականորեն

հայտարարելով նրանց. «Ի՞նչ, անխիղճ ու անաստված ցարե՛ր, միկադոնե՛ր, մինիստրնե՛ր, միտրոպոլիտնե՛ր, քահանանե՛ր, զենեքալնե՛ր, խմբագիրնե՛ր, աֆերիստնե՛ր և էլի ովքեր որ կաք,— դուք ինքնե՛րդ գնացեք ռումբերին ու գնդակներին ընդառաջ, իսկ մենք այդ շէնք ուզում և շէնք գնա» (36, 143):

Ռուս-ճապոնական պատերազմի ժամանակ, ղրուցելով ֆրանսիացի լրագրող Ժորժ Անրի Բուրգոնի հետ, իր «Խելքի՛ եկեք» հոդվածի և հակամիլիտարիստական այլ ելույթների կապակցությամբ Տոլստոյն ասում էր. «Ես ուզում եմ, որ խաղաղության նկատմամբ սերը դադարի ժողովուրդների անվստահ ձգտումը լինելուց, երբ նրանք սարսափահար են լինում պատերազմի արհավիրքներից, և որպեսզի այդ սերը դառնա ազնիվ խղճի անհողողող պահանջը»⁴:

Ինչպիսի՞ հիանալի խոսքեր: Ինչպիսի՞ հավատ՝ ժողովուրդների բանականության նկատմամբ, այն մարդկանց, ովքեր անցնելով արյունահեղ պատերազմների փորձությունների միջով, իրենց ձեռքը կվերցնեն խաղաղությանը պաշտպանելու սրբազան գործը:

Սովետական մարդկանց, աշխարհի բոլոր առաջավոր ու ազնիվ մարդկանց համար Տոլստոյի ժառանգության մեջ թանկ է այն ամենը, ինչ կենսունակ է, ինչ իրապես մեծ է: Խոնարհվելով նրա պայծառ հանճարի առաջ, հիանալով նրա զեղարվեստական ստեղծագործություններով, ըստ արժանվույն հսկայական հարգանք մատուցելով Տոլստոյին՝ որպես սոցիալական արդարության համար պայքարող անհողողող ու արի մարտիկի, մենք միաժամանակ մերժում ենք Տոլստոյին որևէ ձևով «կանոնացման» ենթարկելու ամեն մի փորձ:

Ի՞նչ հիշում ենք, թե ինչպիսի կրթությունամբ էր բողոքում Գորկին «տոլստոյականների» դեմ, որոնք փորձում էին մեծ գրողի անունը շրջապատել սրբության լուսապսակով: «Հիմա կսկսեն առասպել ստեղծել,— գրում էր Գորկին 1910 թ. նոյեմբերին,— և դա զզվելի կլինի, երկրի համար վտանգավոր: Նա ոչ թե սուրբ է, այլ մի մարդ, որը նույնիսկ մեզ համար, որ համաձայն չենք նրա հետ, ավելի մոտ ու ավելի թանկ էր, քան աստված, ավելի մտերմիկ ու հասկանալի, քան բոլոր սրբերը»⁵:

Լենինյան անհաշտելիությամբ էր քննադատում Գորկին Տոլստոյի աշխարհայացքի թույլ, սխալ կողմերը: Եվ Լենինի նման խորապես հիացած էր Տոլստոյի գործերով, նրանում տեսնելով ռուս ժողովրդի ստեղծագործական ուժերի ու իմաստության կենդանի մարմնավորումը: «Նրա մեջ ինչ-որ մի բան կա,— գրում էր Գորկին Տոլստոյի մասին,— որը իմ մեջ ցանկություն է ծնում՝ ասել բոլորին ու ամեն մարդու տեսե՛ք, թե ինչպիսի դարմանալի մարդ է ապրում այս աշխարհում»⁶:

Այսօր, վերընթերցելով Տոլստոյի վեպերն ու պատմվածքները, նրա հրապարակախոսական ստեղծագործությունները և հատկապես հակապատերազմական հոդվածներն ու տրակտատները, համոզվում ես, որ ամենևին էլ չեն թուլացել աշխարհում ներկայումս ապրող մարդկանց հետ նրան կապող լեկերը: Տեսնում ես այդ, ուրախանում և ամբողջովին համաձայնվում Գորկու հետ, որը կես դար առաջ համոզված կերպով ասում էր, թե Տոլստոյն անմահ է:

⁴ «Литературное наследие», т. 75, «Толстой и зарубежный мир», кн. I. էջ 49:

⁵ М. Горький, Собрание сочинений в 30 томах, т. 29, էջ 135:

⁶ Սույն տեղում, հատ. 14, էջ 278:

Սեր բարդ ու դինամիկ ժամանակներում մեզ չի կարող չոգևորել Տոլստոյի անխախտ հավատն այն մասին, որ խաղաղությունը կհաղթի պատերազմին. «Մեր հաղթանակը [պատերազմ հրահրողների դեմ] կասկածի ենթակա չէ ճիշտ այնպես, ինչպես որ կասկածի ենթակա չէ ծագող արևի լույսի հաղթանակը գիշերային խավարի դեմ»: Այսպես էր ասում նա Ստոկհոլմի խաղաղության XVIII կոնգրեսին ներկայացված իր զեկուցման մեջ:

Հավատով ու լավատեսությամբ աուեցուն Տոլստոյի այս խոսքերը ոգեշնչում են մեզ նաև այսօր, երբ մեր ժողովուրդը, որին ղեկավարում է Կոմունիստների Լենինյան կուսակցությունը, հաջողությամբ իրագործում է խաղաղության իր ծրագիրը, երբ երկրագնդի բոլոր մայր ցամաքներում ծավալվում է սլաքարը հանուն այն բանի, որպեսզի միջազգային հարաբերությունների բնագավառում լարվածության թուլացման պրոցեսը լինի անդառնալի, որպեսզի իրականանան մարդկության լավագույն ներկայացուցիչների իղձերը և զավթողական, անարդարացի պատերազմներն առհավետ վերացվեն ժողովուրդների կյանքից: